

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ԴԵԳԻԵԳԱԾՈՒ

ديجيتال

Հրատարակություն Գաղփրէի Հ.Բ.Ը.Մ.ի

نشرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀՀ-ի Սփիւռքի Նախարարուհի Յրանուշ Յակոբեան,
Եգիպտոսի Արտաքին Գործոց Նախարար Ահմետ Ապուլ Ղեյթ եւ
ՀՀ-ի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Արմէն Մելքոնեան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	ՀՀ-ի Տնտեսության Նախարար Ներսես Երիցեանի Այցելությունը Եգիպտոս	1
	ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեանի Այցը Եգիպտոս <i>Անայիս Ճիզվեճեան</i>	2
	Հ Գ Միության եւ ՀՀ-ի Սփիւռքի Նախարարության Կազմակերպած Համահայկական Համաժողովները	3
	Գրողներու Համահայկական 5րդ Համաժողովի Յայտարարությունը	4
	«Արեւմտահայերէնի Ուսուցման Վիճակը Սփիւռքի մէջ» Համահայկական Համաժողովի Մասնակիցներուն Յայտարարությունը	5
	«Արեւմտահայերէնի Ուսուցման Վիճակը Սփիւռքի մէջ» Համահայկական Համաժողովին Ներկայացուցուած ՀԲԸՄիության Հեռավար Համալսարանը	6
	ՀԲԸՄիության Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերճ Թերզեան Հայաստանի Ազգային Գրադարանին Յանձնեց Եգիպտոսի (Արեւ)թերթի Թուայնացուած Հաւաքածոն <i>Յովիկ Էօրտէքեան</i>	8
	«Երազային Հալէպը» Կը Շարունակէ Մնալ Երազային <i>Արաքսի Խաչերեան</i>	9
	Ճորճ Գազազեանի Նուազահանդէսը Պըլլըքտանեան Հանդիսասրահին Մէջ <i>Ա.Ճ.</i>	12
	Anthro - Music <i>Գեղամ Եղալեան</i>	13
	Արուեստագետ Ժիրայր Բաբազեանի Ելոյթը «Կարինէ» Օփերեթի Մասին <i>Ա.Ճ.</i>	14
	Քահիրեի ՀԲԸՄի Թատերական Արուեստի Եւ Շարժանկարահանումի Խմբային Աշխատանքի Հաւաքներ <i>Ա.Ճ.</i>	14
	Երգահան Միհրան Թումանյան Ներկայացուած Չագըր Մշակութային Կեդրոնին Մէջ <i>Ա.Ճ.</i>	15
	Քահիրեի ՀԲԸՄ-ը Կը Հովանաւորէ «Արի Տուն» Ծրագրի Երկու Մասնակիցներ <i>Ա.Ճ.</i>	16
	Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի մրցաշարը <i>Սօսի Ներքտեան-Յակոբեան</i>	17
	Քահիրեի Եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ներու Ամառնային Եղանակի Բացման Հանդիսությունները <i>Ա.Ճ.</i>	18
	ՀԲԸՄիության «Անդրանիկ» Սկաուտական Երրորդ Բանակումը Հայաստանի Մէջ	19
	Քահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Կազմակերպած Զբօսապտոյտը Դէպի «Այն - Սօխնա» <i>Ա.Ճ.</i>	19
	Հոգեհանգիստ Սաթենիկ Ճ. Չագըրի Անդամական	20 20

ԽՄԲԱԳԻՐ
Արաքսի Տօզլէթեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**
Պերճ Թերզեան

**ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**
Անայիս Ճիզվեճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏՍԱԿԱՆ
ՁԵՄԻՈՐՈՒՄ**
Շահէ Լուսարարեան

**ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ
ՇԱՐՈՒՎՃԸ**
Անի Պողոսեան
Գարոլին Հէշեմա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Printing House

**ԹԻԻ 56 Նոր Շրջան
ՅՈՒՒԼԻՍ 2010**



ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍ



Ձախեն՝ աջ Եգիպտոսի Տեղեկատվության և Հաղորդակցության Նախարար Տոքթ. Թարեք Զամալ, ՀՀ-ի Տնտեսության Նախարար Ներսես Երիցեան և Եգիպտոսի Վարչապետ Տոքթ. Ահմետ Նագիֆ

ՀՀ-ի Տնտեսության Նախարար Ներսես Երիցեան եւ իր գլխավորած պատուիրակու-թիւնը Մայիս 30 - Յունիս 2, Եգիպտական "Artoc Group" ներդրումային ընկերութեան հրաւերով այցելեցին Եգիպտոս:

Պատուիրակութեան մաս կը կազմէին Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեան, ՀՀ-ի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսեան եւ Հայաստանի Ազգային Մրցունակութեան Հիմնադրամի նախագահ Բեկոր Փափագեան:

Համաձայն Եգիպտոսի մօտ ՀՀ-ի Դեսպանութեան տուած հաղորդագրութեան, Նախարարը հանդիպումներ ունեցած է Եգիպտոսի Վարչապետ Տոքթ. Ահմետ Նագիֆի, Տեղեկատվութեան եւ Հաղորդակցութեան Նախարար Թարեք Մոհամետ Զամալի, Միջազգային համագործակցութեան Նախարարուհի Ֆայզա Ապուլ Նակայի եւ Գահիրէի Կառավարիչ Ապտ Էլ Ազիմ Էլ-Ուազիրի հետ:

Այս հանդիպումներուն ընթացքին, որոնց ներկայ եղած է նաեւ Եգիպտոսի մօտ ՀՀ-ի Արտակարգ եւ Լիազօր Դեսպան Արմեն

Մելքոնեան: Կողմերը անդրադարձած են Հայաստան - Եգիպտոս տնտեսական համագործակցութեան եւ իրանման անհրաժեշտութեան, ներդրումային միասնական ծրագիրներու իրականացման եւ այլ երկ-կողմանի հետաքրքրութիւն ներկայացնող ոլորտներու, ինչպէս տեղեկատուական գործիքներու, կրթութեան, դեղագործութեան աշխոյժ զարգացման անհրաժեշտութեան:

Եգիպտոսի Վարչապետը ընդգծած է որ հայ - Եգիպտական տնտեսական յարաբերութիւնները զարգացնելու համար առկայ է ե՛ւ ներուժ ե՛ւ պատրաստակամութիւն:

Կողմերը անդրադարձած են նաեւ Երեւանի մէջ յառաջիկայ Սեպտեմբերին նախատեսուող հայ - Եգիպտական միջկառավարական յանձնաժողովին գումարելիք նիստին առընչուող կազմակերպչական հարցերուն:

Այս առթիւ, ի պատիւ պատուիրակութեան ՀՀ-ի Դեսպանութիւնը ընդունելութիւն մը կազմակերպած էր դեսպանատան պարտեզին մէջ:



ՀՀ ՍՓԻՈՔԻ ՆԱԽԱՐԱՐ ԸՐԱՆՈՒՅ ՅԱԿՈՒԲԱՆԻ ԱՅՑԸ ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտոս իր կարճ այցելության ընթացքին, Հայաստանի Հանրապետության Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան, Կիրակի 13 Յունիսին, Գահիրեի Հայաստանի Հանրապետության դեսպանատան մէջ, հանդիպում ունեցաւ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի կազմին, ինչպէս նաեւ Գահիրեի Տեղական Մասնաժողովի եւ Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզական ակումբի ներկայացուցիչներուն հետ:

Այս հանդիպումը որ կայացաւ Հայաստանի Հանրապետության Արտակարգ եւ Լիազօր դեսպան Դոկտ. Արմէն Մելքոնեանի ներկայութեան, բարեպատեհ առիթ մըն էր զոյգ կողմերուն համար, փոխադարձ գործունէութեանց մասին մօտէն ծանօթանալու, անոնց զարգացման կարելիութիւններուն շուրջ գաղափարներ փոխանակելու, յօգուտ հայկական Սփիւռքին ընդհանրապէս եւ մեր համայնքին մասնաւորապէս:

Գահիրեի ՀՀ Դեսպանատան մէջ, Տիկին Յակոբեան հանդիպումներ ունեցաւ նաեւ «Արեւ», «Յուսաբեր», «Զահակիր» թերթերուն եւ մշակութային Միութեանց ներկայացուցիչներուն հետ:

Աղեքսանդրիոյ հռչակաւոր հին գրադարանին տեղ կառուցուած սոր գրադարանին մէջ, Նախարար Յակոբեան մասնակցեցաւ Եգիպտոսի առաջին վարչապետ, հայազգի նշանաւոր քաղաքական եւ պետական դէմք՝ Նուպար Փաշայի (1825-1899) յուշերու արաբերէն թարգմանութեան հրատարա-

կութեան շնորհահանդէսին:

Իր ողջոյնի խօսքով, Նախարարը մեծապէս գնահատեց Նուպար Փաշայի կատարած դերը Եգիպտոսի ժամանակակից պատմութեան մէջ: Ան նաեւ գովաբանեց զայն հայ-եգիպտական դարաւոր բարեկամութիւնը ամրապնդած ըլլալուն համար եւ զինք բնորոշեց իբր խորհրդանիշը՝ հայ-եգիպտական բարեկամութեան:

Աղեքսանդրիոյ Ռուսական Մշակութային Կեդրոնին մէջ, Նախարարը այցելեց տասը հայրենի արուեստագետներու նկարներու ցուցահանդէսը՝ իրագործուած Եգիպտոսի հայկական եւ ռուսական դեսպանատանց միացեալ ջանքերով:

ՀՀ Սփիւռքի Նախարարը ընդունուեցաւ նաեւ Եգիպտոսի Արտաքին Գործոց Նախարար՝ Ահմետ Ապուլ Ղէյթի կողմէ: Երկու խօսակիցները իրենց գոհունակութիւնը յայտնեցին հայ-եգիպտական բարձր մակարդակի յարաբերութեանց նկատմամբ: Անոնք քննարկեցին հարցեր Եգիպտոսի մէջ հայկական գաղութին կատարած դերին եւ բերած նպաստին կապակցութեամբ ինչպէս նաեւ մանրամասնութիւններ՝ Ապուլ Ղէյթի յառաջիկային Հայաստան կատարելիք այցելութեան շուրջ: Նախարար Ապուլ Ղէյթ բարձր գնահատեց եգիպտահայ համայնքի կատարած դերը Եգիպտոսի մէջ եւ առաջարկեց առաւել եւս ամրապնդել բարեկամական կապերը Հայաստանի եւ Եգիպտոսի միջեւ:

Ա.Ճ

Ձախեն՝ աջ
Տոքթ. Կիզէն Ճիզմեճեան
Տիար Հրաչ Սիմոնեան
Տոքթ. Կարօ Աբգարեան
Տիկին Կասիա Ճղալեան
ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան
ՀՀ-ի Դեսպան Արմէն Մելքոնեան
Տիար Պերճ Թերզեան
Տիար Խորէն Գալընեան
Տիար Օննիկ Պըրքետեան
Տիար Սիսաք Չէչճեան
ՀՀ-ի Եգիպտոսի Դեսպանութեան խորհրդակալ
Հրաչ Փոլատեան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՀՀ-Ի ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԸ

28 Յունիսին 5 Յուլիս Ծաղկաձորի մէջ գումարուեցան Հայաստանի Գրողներու Միութեան եւ ՀՀ-ի Սփիւռքի Նախարարութեան կազմակերպութեամբ զոյգ համաժողովներ:

28 Յունիսին 2 Յուլիս կայացաւ «Հայ Գրականութիւնը Հայոց Միջնաբերդ» նշանաբանով Գրողներու Միութեան 5րդ համաժողովը, իսկ 3-5 Յուլիսին՝ ՀՀ-ի Սփիւռքի Նախարարութեան «Արեւմտահայերէնի Ուսուցման Վիճակը Սփիւռքում» նիւթը շօշափող համաժողովը:

Սոյն համաժողովները կայացան ՀՀ-ի Մշակոյթի Նախարարութեան, Համաշխարհային Հայկական Գոնկրեսի, Ռուսաստանի Հայերու Միութեան ու Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան աջակցութեամբ:

Համաժողովներուն Սփիւռքէն հրաւիրուած էին 20 երկիրներու մօտ 90 պատուիրակներ:

Գրողներու Միութեան համահայկական 5րդ համաժողովին բացումը կայացաւ Գրողներու Միութեան Ծաղկաձորի ստեղծագործական տան մեծ դահլիճին մէջ 29 Յունիսին: Բացման խօսքով ելոյթ ունեցաւ ՀԳՄ-ի Նախագահ Լեւոն Անանեան: Ապա, կարդացուեցան ողջոյնի ուղերձներ յղուած ՀՀ-ի Նախագահ Սերժ Սարգսեանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կողմէ: Ելոյթ ունեցաւ նաեւ ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Տիկին Հրանուշ Յակոբեան:

Կարճ դադարէ մը ետք մասնակից պատւիրակները անցան համաժողովի հետեւեալ նիւթերու քննարկման:

- 1- Նոր իրականութիւն եւ նոր գրականութիւն (գարգացման միտումներ)
- 2- Հայ գրականութիւնը արդի աշխարհի համատեքստում
- 3- Ժամանակակից հայ գրականութեան միջազգայնացումը
- 4- Գրական մամուլը Հայաստանում եւ Սփիւռքում

Սոյն նիւթերուն վերաբերող զեկուցումներն ու քննարկումները ավարտեցան 2 Յուլիսին եւ նոյն օրուայ ամփոփիչ նիստէն ետք ներկայացուեցաւ Գրողներու Միութեան 5րդ համաժողովին յայտարարութիւնը: (Տեսնել էջ 4)

ՀՀ-ի Սփիւռքի Նախարարութեան կազմակերպած «Արեւմտահայերէնի ուսուցման վի-

ճակը Սփիւռքում» նիւթը քննարկող համաժողովը սկիզբ առաւ 3 Յուլիսին ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեանի կուռ ելոյթով:

Յաջորդական երեք օրերու ընթացքին գումարուած նիստերուն, որոնց միշտ ներկայ էր Նախարարուհին, համաժողովի մասնակիցներուն կողմէ զեկուցումներ ներկայացուեցան, որոնք առընչուած էին հետեւեալ հիմնական երեք նիւթերուն:

- 1- Արեւմտահայերէնի ուսուցման հիմնախնդիրները
- 2- Արեւմտահայերէնը եւ Սփիւռքեան դպրոցը
- 3- Արեւմտահայերէնը եւ դասագիրքերու հիմնախնդիրները

Հոս նշենք, թէ Եգիպտոսէն համաժողովին մասնակցեցաւ ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ եւ Գահիրէի Մասնաճիւղի պատուոյ ատենապետ Տիար Պերճ Թերզեան, որ Նախագահեց վերոնշեալ հիմնական երկրորդ նիւթի երրորդ նիստին, որուն ընթացքին ներկայացուց «Հայեցի Դաստիարակութեան վիճակը Եգիպտոսի մէջ Այսօր» խորագրով զեկոյցը:

Համաժողովի ընթացքին ներկայացուած զեկուցումներու քննարկումներուն եւ կարծիքներու փոխանակումէն ետք, համաժողովը ամփոփեց իր աշխատանքները եւ հրապարակեց անկէ բխած «Յայտարարութիւն» մը, զոր կարելի է կարդալ էջ 5-ի վրայ:

Համաժողովներու ծիրէն ներս համաժողովի մասնակիցները այցելեցին Էջմիածին եւ հանդիպում ունեցան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին հետ: Անոնք առիթը ունեցան ներկայ ըլլալու Կիւմրիի մէջ տեղի ունեցած Յովհաննէս Շիրազի նուիրուած յոբելինական հանդիսութեան, այցելեցին տուն թանգարաններ եւ տեսարժան վայրեր: Մասնակիցները նաեւ ներկայ եղան գեղանկարչական ցուցահանդէսներու եւ գրական, երաժշտական եւ մշակութային ձեռնարկներու:

Խանդավառող ելոյթով մը համաժողովին փակումը կատարեց ՀՀ-ի Սփիւռքի Նախարար Հրանուշ Յակոբեան:



ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸԱՄԱՇՈՂՈՎԻ 3ԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ 5-րդ ԸԱՄԱԺՈՂՈՎԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Համաժողովի մասնակից Հայաստանի ԵՄ Սփիւռքի գրողները վերստին մեկտեղուել են Մայր Հայրենիք՝ միաւորուած այն գիտակցութեամբ, որ հայ գրականութիւնը մեր ժողովրդի հոգեւոր միջնաբերդն է նրա ազգային ոգու, հայրենակերտ երազանքների, բարոյական, հոգեմտաւոր արժէքների ու ձգտումների ջահակիրը:

Այս դարաւոր առաքելութեան կարեւորութիւնը նոր բովանդակութիւն է ստանում յատկապէս այսօր, երբ Հայաստանը, նախորդ դարավերջի ծանր փորձութիւնները յաղթահարելով, քայլ առ քայլ կերտում է աստիճանաբար ամրապնդում է իր պետականութիւնը: Քաղաքական այս հանգամանքը գրականն է հայութեան ստեղծագործական ուժերի համախմբման՝ ի շահ մեր ազգային նպատակների իրագործման եւ արժանապատիւ ներկայութեան՝ արագօրէն վերափոխուող ժամանակների համատեքստում:

Ելնելով այս գերակայութիւնից, համաժողովը բարձր է գնահատում հայրենի իշխանութիւնների եւ հասարակական ուժերի, ի մասնաւորի՝ ՀՀ Սփիւռքի Նախարարութեան եւ Հայաստանի Գրողների Միութեան գործունեութիւնը, որը նպատակամղուած է Հայրենիք- Սփիւռք յարաբերութիւնների խորացմանը, մտաւոր եւ կազմակերպչական ներուժի համախմբմանը, ազգանպաստ ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

Այսօրինակ ծրագրերի արդիւնաւետ ընթացքի եւ հեռանկարի առաջնահերթ գիտակցումով, համաժողովն ընդգծում է մեր ընդհանուր մշակութային կենսատարածքի պահպանմանը, հարստացմանը եւ զարգացմանը միտուած գործողութիւնների աջակցութեան հրամայականը՝ հայրենի պետութեան եւ Սփիւռքի ազգային-հասարակական կառոյցների կողմից: Այդպիսի գործողութիւնները՝ կրթական թէ՛ հրատարակչական, տաղանդաւոր անհատների թէ՛ մշակութային օճախների խրախուսման քաղաքականութիւնը, մեծապէս կարող են

նպաստել ազգային առաջընթացմանն ու հայապահպանութեանը ինչպէս Հայաստանի Հանրապետութիւնում եւ Արցախում, այնպէս էլ աշխարհի տարբեր միջօրեականներում յամառօրէն գոյատեւող գաղթօճախներում:

Մենք առանձնայատուկ կարեւորութիւն ենք տալու հայ ինքնութեան ամենագօրեղ գրաւականի՝ հայոց լեզուի հանդէպ գուրգուրանքի եւ պատասխանատուութեան սկզբունքային դիրքորոշմանը: Ի հակակրճիմ օտարալեզու կրթութեանը, իւրաքանչիւր լեզուական գիշում կամ նահանջ յղի է ապագային ծանրագոյն հետեւանքներով, որի խոր եւ ամբողջական գիտակցութեամբ՝ Հայաստանի ԵՄ Սփիւռքի հանրութիւնը ուշադրութեամբ հետեւած է մեր ազգային կրթական բնագաւառը արդիականացնելու քայլերին՝ վերահաստատելով իր այն միասնական ելակետը, որի համաձայն՝ հայոց լեզուն հայ ժողովուրդի գոյապայքարի, միասնականութեան եւ մշակութային ինքնագիտակցութեան անփոխարինելի գինանոցն է, ուստի՝ գերագոյն պետական արժէք: (Համաժողովի պատուիրակները լիովին կիսում են այս առիթով ՀԳՄ նախագահութեան մայրենի լեզուի մասին յայտարարութեան մտահոգութիւնները):

Արդի աշխարհում հայկական մշակութային հասցէն էլ աւելի շեշտադրելու, ժամանակակից ընթերցողին եւ յատկապէս նոր սերնդին հայ գրականութեան լաւագոյն նմոյշներին մօտեցնելու նպատակով, մենք հրատապ ենք համարում հայ գրականութեան ինտերնետային գրադարան հիմնադրելու գաղափարը, որը մէկ միասնական դաշտում կը ներկայացնի մեր գրականութեան ձեռքբերումները եւ մեծապէս կ'ընդարձակի անոր հասարակական ներգործութեան շառաւիղը: Ցանկալի է, որ Սփիւռքի նախարարութիւնը եւ ՀԳՄ-ն համատեղ մշակեն այդպիսի նախագիծ՝ հայերէն, անգլիերէն, ռուսերէն եւ այլ լեզուներով, ինչը առաւել կարեւոր է հայոց գրատրպութեան 500-ամեակի միջոցառումներին



ընդառաջ եւ կարող է աւելացնել հետաքրքրութիւնը մեր երկրի ու անոր մշակոյթի հանդէպ:

Գրողի եւ գրականութեան քաղաքացիական պատասխանատուութեան գիտակցումով՝ մենք մեր զօրակցութիւնն ենք յայտնել Արցախեան հիմնահարցը պատմաիրաւական արդարութեան դիրքերու եւ բացառապէս խաղաղ միջոցներով լուծելու ՀՀ ջանքերին, միաժամանակ դատապարտելով ռազմատենչ եւ ագրեսիւ ոտնձգութիւնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան հանդէպ, ինչպէս նաեւ մտահոգութիւն արտայայտելով միջազգային որոշ կառոյցների կողմից այդ գործողութիւնների ոչ համարժէք գնահատականների կապակցութեամբ, ինչը կարող է անուղղակիօրէն խրախուսել պատերազմի հրձիգներին:

Հայոց ցեղասպանութեան 95-ամեակի տարուան, իբրեւ պահանջատեր ժառանգորդները մեր մէկուկէս միլիոն նահատակների, միջազգային ընտանիքի բոլոր ան-

դամներին եւս մէկ անգամ կը յիշեցնենք այս շարունակուող ոճիրի ճանաչման եւ հատուցման անժամանցելի կարելորութիւնը:

Արդի աշխարհի մարտահրաւերներին ի յանդիման՝ Գրողների Համահայկական 5-րդ Համաժողովի մասնակիցները կրկին կը փաստեն, որ հայ ժողովուրդը ուժեղ է իր ազգային հիմնարար եւ հայրենակերտ արժէքների հանդէպ ունեցած հաւատարմութեամբ եւ ժամանակակից կեանքի պահանջների հետ նորանալու տաղանդով, որը նոյնպէս դրսեւորուել է պատմութեան ընթացքին: Այս համոզումով ալ մենք կ'աւարտենք համաժողովի աշխատանքները՝ մեր գրական, մշակութային եւ ազգային-հասարակական պարտականութիւնները շարունակելու մեր կոչմանն ու առաքելութեանը գիտակից հայ գրողին վայել անմնացորդ հաւատարմութեամբ:

Ծաղկաձոր, 2010թ. 2 Յուլիսի

«ԱՐԵՒՄՏԱՐԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՓԻՒՌՔԻ ՄԷՋ» ՐԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՐԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Ընդգծելով Հայաստան-Սփիւռք գործակցութեան կարելորութիւնը համահայկական խնդիրներու լուծման համար,

Ողջունելով ՀՀ Սփիւռքի նախարարութեան նախաձեռնութիւնը՝ օժանդակելու Սփիւռքի մէջ արեւմտահայերէնի ուսուցման հիմնախնդիրներու լուծման,

Կարելորդելով արեւմտահայերէնի միասնական քերականութեան, ուսուցման ձեւերու եւ մեթոտներու ներդրումը Սփիւռքի մէջ, ինչպէս նաեւ արեւմտահայերէնի միասնական դասագիրքերու ստեղծումը,

Ընդունելով ՀԱՅՈՑ ԼԵՉՈՒՆ իբրեւ հայկական ինքնութեան հիմնական բաղադրիչ եւ պահպանման կարելորագոյն գրաւական՝

Մենք՝ 2010 թուականի Յուլիս 3-5 Ծաղկաձորի մէջ կայացած համահայկական համաժողովի մասնակիցներս

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՆԸ

Համաժողովի ընթացքին ներկայացուած գեկուցումները, քննարկումները եւ մտքերու փոխանակումը անգամ մը եւս հաստատեցին Հայաստանի եւ Սփիւռքի մասնագետներու համագործակցութեան անհրաժեշտութիւնը հայերէնի տարածման եւ զարգացման, հայկական ազգային ինքնութեան պահպանման եւ համահայկական այլ հիմնահարցերու լուծման համար:



Կը կարելորենք պատմական ճակատագրի բերումով օտար պետութիւններու մէջ ապրող հայոց լեզուի մասնագետներու ներուժի համախմբումը եւ համագործակցութիւնը՝ իբրեւ հայոց լեզուի զարգացման եւ տարածման գրաւական:

Գոհունակութեամբ կ'ա ղ ճ ա ն ա գ ը ե ք , որ մենք՝ աշխարհի տարբեր երկիրներու մէջ բնակող հայերէնի մասնագետներու եւ ուսուցիչներու, **հաւաքուած ենք այստեղ՝** նշուած խնդիրներուն լուծումներ գտնելու վճռականութեամբ:

Կոչ կ'ուղղենք Հայաստանի Հանրապետութեան ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կ ա ղ ա վ ա ղ ը թ ի լ ն ն ե ղ ու եւ Սփիւռքի կառոյցներուն՝ աշակցիլ հայերէնի զարգացման եւ տարածման:

Կը հաստատենք մեր վճռականութիւնն արեւմտահայերէնի դասական ուղղագրութեամբ միասնական դասագիրքերու համակարգման ուղղութեամբ, որուն համար **անհրաժեշտ կը համարենք** ըստ կրթական մակարդակի Սփիւռքի մասնագետներու եւ մանկավարժներու հետ համագործակցութեամբ ստեղծել մասնագիտական յանձնախումբեր, ինչպէս նաեւ համակարգող խորհուրդ:

Մենք՝ 2010 թուականի Յուլիս 3-5 Ծաղկաձորի մէջ կայացած համահայկական համաժողովի մասնակիցներս՝ **մեր պատրաստակամութիւնը կը յայտնենք** յետայսու զբաղիլ համաժողովի ընթացքին բարձրացուած խնդիրներու լուծման աշխատանքներով՝ մշակելով համապատասխան ծրագիր:

Կոչ կ'ուղղենք սփիւռքեան եւ հայաստանեան բոլոր կառոյցներուն՝ Սփիւռքի մէջ գլխաւոր հիմնախնդիր համարել հայապահպանութիւնը եւ յատկապէս հայ դպրոցի պահպանումն ու զարգացումը, ինչպէս նաեւ հետեւողականօրէն նպաստել արեւմտահայերէնի՝ որպէս ազգային արժեքի, պահպանման եւ զարգացման:

05.07.2010թ., Ծաղկաձոր

«ԱՐԵՎՍԱՆՎԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԻՃԱԿԸ ՍՓԻՒՐՔԻ ՄԷՋ» ՇԱՂԿԱՅԿԱԿԱՆ ՇԱՄԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԵՑԱՒ ՇՐՄԻՈՒԹԵԱՆ ՇԵՌԱՎԱՐ ՇԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Յուլիս 3-5 օրերուն, Ծաղկաձորի Գրողներու Միութեան հանգստեան տան սրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Սփիւռքի նախարարութեան կազմակերպած «Արեւմտահայերէնի ուսուցման վիճակը Սփիւռքի մէջ» Համահայկական Համաժողովը:

Բացման իր ելոյթին մէջ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան համաժողովին մասնակցելու նպատակով Միացեալ Նահանգներէն, Զանաւայէն, Ֆրանսայէն, Յունաստանէն, Սուրիայէն, Թուրքիայէն, Լիբանանէն, Եգիպտոսէն, Արժանթինէն եւ Երեւանէն ժամանած Արեւմտահայերէնի մասնագետներուն կարողութիւնները համախմբելու կոչ ըրաւ: Ան աւելցուց, որ

Սփիւռքի մէջ այսօր աւելի քան 170 հազար հայ աշակերտ հայկական դպրոց կը յաճախէ, որով անյետաձգելի դարձած է համահայկական դասագիրքերու ստեղծումը: Աւարտելով իր ելոյթը, Նախարար Յակոբեան կոչ ըրաւ մէկ կողմ դնել մասնագիտական տարակարծութիւնները եւ համախմբուիլ Սփիւռքի նախակրթարաններու, միջնակարգ եւ երկրորդական ամենօրեայ եւ միօրեայ դպրոցներու համար մայրենիի դասագիրքեր պատրաստելու ընդհանուր գաղափարին շուրջ:

Ի թիւս Սփիւռքէն եւ Հայաստանէն ժամանած Արեւմտահայերէնի մասնագետներուն եւ ուսուցիչներուն, համաժողովին կը մասնակցեր նաեւ Հայկական Բարեգործա-



կան Ընդհանուր Միութեան Կեդրոնական Կարչական Ժողովի անդամ, ԶԲԸՄ-ի Զեռավար Զամալսարանի Զիմնադիր Տնօրեն Երուանդ Զօրեան, որ լուսապաստառի վրայ ներկայացուց համալսարանի կրթական եւ համացանցային ուսուցման կարելիութիւնները եւ ուսումնական ծրագիրերը: Ան ասելցուց, որ Զեռավար Զամալսարանին նպատակն է օգնել ուսանողներուն համացանցային կրթութեան միջոցով ձեռք բերելու հայագիտական նիւթերու հիմնարար գիտելիքներ: ԶԲԸՄիութեան կրթական այս նոր ծրագիրը հետաքրքրութիւն յառաջացուց ներկաներուն մօտ, որոնք համացանցային ուսուցման այս նորագոյն ձեռնարկին գործունէութեան վերաբերեալ հարցեր ուղղեցին Երուանդ Զօրեանին:

Զամաժողովին կը մասնակցէին նաեւ ԶԲԸՄիութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերճ Թերզեան, ԶԲԸՄիութեան Զայաստանի Ներկայացուցչութեան փոխ-տնօրեն Յովիկ Էօրտեքեան եւ ԶԲԸՄիութեան Զեռավար Զամալսարանի կրթական բաժնի տնօրեն Յասմիկ Ալափեան: Պերճ Թերզեան, որ կը նախագահէր համաժողովի Յուլիս 4-ի երրորդ նիստը, զեկուցում մըն ալ ներկայացուց «Զայեցի դաստիարակութիւնը Եգիպտոսի մէջ Այսօր» նիւթին շուրջ:

Պերճ Թերզեան խօսեցաւ Արեւմտահայերէնի մասնագետ ուսուցիչներու թիւի նըլազումի, նորերու բացակայութեան եւ ծնողներու ու աշակերտներու մեծամասնութեան մօտ հայերէնի հանդէպ նախանձախնդրութեան եւ հետաքրքրութեան պակասի մասին, որ կը սպառնայ Արեւմտահայերէնի

առողջ գոյատեւումին եւ զարգացումին: Ան առաջարկեց Զայաստան Զամահայկական Զիմնադրամի նմանողութեամբ հովանաւոր մարմնի մը գոյառումը՝ ի պաշտպանութիւն Արեւմտահայերէնի, ինչպէս նաեւ հիմնումը Արեւմտահայերէն դասաւանդող մասնագետ ուսուցիչ պատրաստող բարձրագոյն հիմնարկի մը՝ նախընտրաբար Զայաստանի մէջ:

Զամաժողովի մասնակիցներ ներկայացուցին իրենց գաղութներուն մէջ գործող հայկական դպրոցներուն վիճակը, խօսեցան ուսուցիչներու վերապատրաստումի մեթոտներու փոփոխութեան անհրաժեշտութեան, գոյութիւն ունեցող մայրենիի դասագիրքերու անկատարութեան, դասաժամերու սակաւութեան եւ այլ հարցերու մասին:

Զայաստանի Սփիւռքի նախարար Զրանուշ Յակոբեան շնորհակալութիւն յայտնեց առաջին անգամ քով-քովի եկած Արեւմտահայերէնի մասնագետներուն՝ նախարարութեան հրաւերին ընդառաջելու եւ չափազանց կարգապահ մասնակցութեան համար: «Սփիւռքը յաւերժ ներկայութիւն է Զայաստանի մէջ եւ իր խօսքը պէտք է հնչէ Զայրենիքի մէջ: Այո՛, այս սրահին մէջ մենք պէտք է լսէինք բոլոր մտահոգութիւնները եւ տազնապները», -ըսաւ նախարար Յակոբեան: Զամաժողովի մասնակիցները ընդունեցին յայտարարութիւն մը եւ կազմեցին աշխատանքային յանձնախումբ մը, որ պիտի լծուի Արեւմտահայերէնի միասնական դասագիրքերու նախապատրաստութեան աշխատանքներուն:



ԶԶ-ի Սփիւռքի Նախարար Զրանուշ Յակոբեան ելոյթի պահուն



ԶԲԸՄ-ի Զեռավար Զամալսարանի Զիմնադիր Տնօրեն Երուանդ Զօրեան ելոյթի պահուն



Հ Բ Ը ՄԻՈՒԹԵԱՆ ԵԳԻՊՏՈՍԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՏԵՆԱՊԵՏ ՊԵՐՃ ԹԵՐՉԵԱՆ ՐԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՅԱՆՁՆԵՑ ԵԳԻՊՏԱՐԱՅ «ԱՐԵՒ» ԹԵՐԹԻ ԹՈՒԱՅՆԱՑՈՒԱԾ ՐԱԲԱԲԱԾՈՆ

Ծաղկածորի մէջ գումարուած գրողներու համահայկական, ինչպէս նաեւ Սփիւռքի մէջ Արեւմտահայերէնի դասաւանդման վիճակին նուիրւած համաժողովներուն մասնակցելու նպատակով Երեւան գտնուող ՀԲԸ Միութեան Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ Պերճ ԹերՉեան իր տիկնոջ հետ Յուլիս 7ին այցելեց Հայաստանի Ազգային Գրադարան՝ մասնակցելու Ազգային Գրադարանի տօնին առիթով կազմակերպուած ձեռնարկին:



Ազգային Գրադարանի տօնը Հայաստանի մէջ թէեւ կը նշուի Յուլիս 4ին, Յուլիս 7-ին տեղի ունեցած ձեռնարկը սակայն յատուկ իրադարձութեամբ մը յատկանշուեցաւ: Արդարեւ, ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի Ատենապետ, Գահիրէի ՀԲԸՄ-ի «Տեղեկատու» պաշտօնաթերթի եւ «Արեգ» արաբատառ պարբերականի խմբագրութեանց խորհրդատու, Եգիպտահայ մտաւորական Պերճ ԹերՉեան Ազգային Գրադարանին յանձնեց Գահիրէի մէջ լոյս տեսնող «Արեւ» թերթի 1915-2000 թուականները ընդգրկող թուայնացուած հարուստ հաւաքածոն:

Հայաստանի Ազգային Գրադարանի Տնօրէն Դաւիթ Սարգսեան շնորհակալութիւն յայտնեց արժեքաւոր նուիրատուութեան համար, ինչպէս նաեւ շնորհաւորեց գրադարանի աշխատակիցները իրենց տօնին առիթով:

Խօսելով թուայնացուած հաւաքածոյին պատմական արժեքին մասին, Պերճ ԹերՉեան շեշտեց Եգիպտահայ պարբերական մամուլի ընտանիքին մաս կազմող «Արեւ»ի 1915-1923 թուականներու թիւերուն պատմական նշանակութիւնը, որոնց էջերուն մէջ լոյս կը սփռուի Եղեռնի եւ անոր յաջորդած տարիներու գաղթաշխարհի հայ կեանքի կարեւոր իրադարձութեանց վրայ: Պերճ

ԹերՉեան յայտնեց թէ հաւաքածոյի թուայնացումը իրականացած է Գահիրէի ՀԲԸՄ-ի մասնաճիւղի որոշումով եւ ՀԲԸՄ-ի Գահիրէի «Սաթենիկ Չաքըր» հիմնադրամի միջոցներով: Տեղին է յիշել թէ հայ մամուլի շերմ պաշտպան Պերճ ԹերՉեան 2009-ի Յոկտեմբերին հրատարակած է «Ինչպէ՞ս Տօնուեցաւ Հայ Պարբերական Մամուլի 200-Ամեակը Եգիպտոսի մէջ» գրքոյկը՝ թուղթին յանձնելով Եգիպտոսի նման փոքրաթիւ գաղութին մէջ հայ մամուլի երկրորդ դարադարձին նուիրուած ցուցահանդէսի կազմակերպման մանրամասնութիւնները:

Ձեռնարկին ներկայ էր նաեւ ՀԲԸ Միութեան Հայաստանի Ներկայացուցչութեան Տնօրէն Աշոտ Ղազարեանը: Ան շնորհաւորելով գրադարանի ողջ աշխատակիցները գրադարանի տօնին առիթով, իր գոհունակութիւնը յայտնեց, որ հակառակ բազմաթիւ դժուարութիւններու, հայ գրքի հանդէպ երիտասարդութեան սերը եւ հետաքրքրութիւնը օրըստօրէ կ'աճի եւ գրականութեան թուայնացումն ու տեղեկատուական ժամանակակից այլ միջոցներու օգտագործումը կը նպաստեն որ երիտասարդներ վերըստին ձեռք առնեն հայ գիրքը:

Յովիկ Եօրտէքեան



«ԵՐԱՋԱՅԻՆ ՇԱԼԵՊԸ» ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՄՆԱԼ ԵՐԱՋԱՅԻՆ

Յունիս ամսոյն առիթը ունեցայ Յալէպ այցելելու եւ այդ առթիւ ծանօթանալու հալէպահայ առօրեային:

Առաջին անգամ Յալէպ եղած էի 1958-ին հօրս հետ, որ փափաքած էր իր միևնուճար պարմանի դստեր ծանօթանալու այն ճամբաները ուրկէ ինք անցած էր տարագրութեան շրջանին, իբր տարագիր ոտնաբոսիկ հայ որբուկ: Տեղահանութեան առաջին օրէն իսկ իր ծննդավայր Մարգուանի (Սեբաստիոյ Նահանգ) մէջ իր ընտանիքին անդամներուն երեցները՝ մայր, հայր, մեծ եղբայր սպաննուած էին եւ աղջնակները ու փոքր տղէկները լքուած անտիրական:

Յալէպը հայ տարագիրներուն համար փրկութեան լաստ մը եղած է դարասկզբին: Անոնք որոնք հրաշքով ողջ հասած են Յալէպ, ձեռով մը ազատած են սպանդէ: Իսկ անոնք որոնք Տեր Չօր քշուած են՝ անտարակոյս Նահատակուած:

Նոյնպէս մօրաքրոջմէս իմացած էի թէ ինչպէս մօրենական ընտանիքս կողոպտուած էր տարագրութեան շրջանին Յալէպ չհասած: Անոնք Մարաշէն՝ որ միայն մօտաւորապէս 150 քիլոմետր հեռու կը գտնուի Յալէպէն, բեռնատար կառքով ճամբայ ելած էին: Յարազատներս, մեծ մայրս Ովսաննան եւ իր շալակին կրտսեր մօրեղբայրս Չաւենը եւ պարմանի երկու մօրաքոյրներս Արփիէն եւ Արաքսին, կողոպուտէն ետք, մնացեալ ճամբան ահ ու վախով հետիոտն կը շարունակեն իրենց ետին ճարահատ թողելով, իր իսկ պնդումով, իրենց ուժակորոյս մեծ մայրը «Ճըճըխ Անան»: Հեռուէն Յալէպի լոյսերը նկատելով այդ ուղղութեամբ կը քալեն «Դեպի աղբիւրը լոյսին» կամ կեանքին՝ Յալէպ: Ճամբան գիրենք կը դիմաւորեն երկու երիտասարդներ ձեռքերնին լապտերներ բռնած: Անոնք հայերէն լեզուով կը դիմեն իրենց «Լաց ու կոծի ձայն իմացանք, երթանք տեսնենք մեր հայերուն գլխուն ինչ փորձանք եկաւ նորէն ըսիկք»: Մերիններուն ապահով կ'առաջնորդեն դեպի Յալէպի իրենց սահմանին գտնուող թիթեղաշէն կրպակը եւ ջուր ու խաղող կը մատուցեն: Պզտիկները որոնց լեզուները արդէն ահէն ու վախէն ներս քաշուած էին ու քիմքերնուն փակած ուտելու կամ խմելու կարողութիւն չունէին: Անոնք մէկ կտոր կու լային ու կ'ողբային եւ միաբերան «Մեծ մաման մեծ մաման» կը բաձագանջէին: Փրկարար հրեշտակները լապտերները իրենց ձեռքերուն նոյն ճամբէն ետ կը դառնան «մեծ մաման» որոնելու: Չոյգ տղաքը վերջապէս արշալոյսին կը հասնին «մեծ մամային» մօտ որ ծնկաչոք ձեռքերը երկինք բարձրացուցած կ'աղօթէր: Երիտասարդներէն մին շալակին կը վերցնէ «մեծ մաման», որ փոքրակազմ կին մըն էր ու Յալէպ կը հասցնէ: Տարիներ ետք բոլոր ընտանիքը հրաշքով կը միանայ Գահիրէի մէջ:

Եւ ահա, այսօր, ես Գահիրէէն եկած էի ողջունելի այս բարի քաղաքը որ ապաստան հանդիսացած էր հայութեան փառքի օրերուն (ճգնաժամային օրերէն առաջ), ճգնաժամային օրերու ընթացքին եւ մինչեւ օրս կրկին փառքի օրեր:

Հետաքրքրական հանդիպումներէն յիշեմ այցելութիւնս Ս. Աստուածածին Եկեղեցի ուր Կիրակի 13 Յունիսին չորս Աւետարանիչներու սըրբանկարներու օրհնութիւնը տեղի կ'ունենար ձեռամբ Բերիոյ Թեմի Առաջ-



նորդ Շահան Եպիսկ. Սարգիսեանի: Սրբանկարները գործն էին հայրենի նկարիչ Սամուէլ Պետրոսեանի, երգչուհի Շուշան Պետրոսեանի հօր. իսկ նուիրատուները՝ Զալէպահայ ամուլ մըն էին: Շատ խորհրդաւոր արարողութիւն մըն էր, եկեղեցին հաւատացեալներով լի էր իսկ մթնոլորտը՝ սրբալոյս միւռնոնով եւ անուշաբոյր խունկով լեցուն:

Եկեղեցւոյ բակին մէջ կը հանդիպիմ շատ մը ծանօթներու եւ անծանօթներու, որոնք կը դառնան ծանօթեր Արաքսի Շատոյեան, Պէթի Էպլիղաթեան եւ այլք: Ծանօթներու կարգին՝ Բժիշկ Թորոս Թորանեան որուն ջերմ ընկերութիւնը կը վայելեմ կեցողութեանս ամբողջ շրջանին: Ինչպէս բոլորդ գիտէք Բժիշկ Թորոս Թորանեան 150-է աւելի համով հոտով գիրքերու հեղինակն է եւ նոյնքան մըն ալ գիրքերու եւ պարբերականներու խմբագիրը կամ հրատարակիչը: Մի քանի տարիներ առաջ, մի քանի շաբաթով եղաւ մեր գաղութի հիւրը: Այդ յիշատակներով մինչեւ օրս ինք եւ մենք կ'ապրինք: Ինչո՞ւ չկրկնել:

Յիշատակելի այցելութիւն մըն էր այցելութիւնս ԶԲԸՄ-ի նորակառոյց կեդրոնը Զալէպի Ազիզիէ շրջանի Կապալ Նահր փողոցը: Երեկոյեան 7:00-ն էր եւ կեդրոնը հայ պարման-պարմանուհիներով, պատանիներով եւ երիտասարդ-երտասարդուհիներով կենսունակ: Մին երաժշտական գործիքը ուսին կրած եկած էր, միւսը նկարչական վրձինը: Չիս դիմաւորեց կեդրոնի նուիրեալ եւ եռանդով լի շնորհալի պատասխանատու Թամար Խապայեանը: Միասին շրջագայեցանք կեդրոնի գանազան բաժինները եւ ան հաւատքով ու նուիրումով բացատրութիւններ տուաւ: Կեդրոնի բաժիններէն են ԶԵԸ, Գալուստ Կիւլպէնկեան ՎՆ Նազար Նաճարեան Վարժարանը եւ Սարեան Ակադեմիան:

Թամարը զիս կ'առաջնորդէ Սարեան Ակադեմիա եւ կը ծանօթացնէ ակադեմեայի ներկայ պատասխանատուին հայրենի անգուգական նկարիչ Զրազդան Թոքմաճեանին որ 17 տարիներէ ի վեր հաստատուած է Զալէպ: Մի քանի տասնեակ աշակերտ աշակերտուհիներ, խումբ առ խումբ, Զրազդանի հսկողութեան ներքեւ օրական կը պարապին եւ կը ծանօթանան նկարչութեան արուեստին: Արուեստագետը կը փափաքի որ անոնք աւելի ուշ մասնագիտական ուսում ստատան եւ շարունակեն իրենց ուսումը Սուրիոյ կամ Զայաստանի մէջ եթէ իսկապէս հետաքրքրուած են կերպարուեստով: Ինչո՞ւ Գահիրէի ԶԲԸՄ-ը չիրաւիրէ Զրազդանին երբ ան Զալէպի մէջ այդքան կարեւոր աշխատանք կը տանի Սարեան Ակադեմիայէն ներս, կը հարցնեմ ինքզինքիս:

Ամիսէ մը Զալէպի մէջ լոյս պիտի տեսնէ երկլեզու, գունաւոր տպագրութեամբ մօտ 400 էջոց հատոր մը «Մարաշի Ասեղնագործութիւն Needlework of Marash»: Զատորը կը հրատարակէ Զալէպի Մարաշի Զայրենակցական Միութիւնը եւ Գերմանիկ Վասպուրական Մշակութային Միութիւնը: Զատորը կը վայելէ Զայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի հովանաւորութիւնը: Զատորի գեղարուեստական պատասխանատուն է Զրազդան Թոքմաճեանը: Զատորը հաւաքածոյ մըն է Մարաշի ասեղնագործութեան ձեռագործներու գունաւոր նկարներուն: Ամէն էջի վրայ հրամցուած է, աշխատութեան գունաւոր նկարը, աշխատող կնոջ կամ աղջկան անունը, ազգանունը անձին նկարը եւ symbol-ներու «խորհրդանշան»ներու բացատրութիւնը ուսումնասիրուած՝ նկարիչ Զրազդան Թոքմաճեանի կողմէ: Ձեռագործները աշխատողները Մեծ Եղեռնէն Մարաշցի վերապրողներ կամ անոնց դուստրերը կամ թոռնուհիներն են: Զատորին պիտի ընկերանայ խտասալիկ (DVD) մը որուն մի-



չոցով պիտի բացատրուի Մարաշի գործի աշխատութեան ձեւն ու կարգը: Եւ այսպէսով պիտի վերակենդանանայ կորսուած աւանդ մը: Հայրենակցական միութեան բոլոր անդամները ոգի ի բռին աշխատած են իրականացնելու համար այս գործը: Երանի թէ այլ հայրենակցական միութիւններ օրինակ առնեն այս հրատարակութենէն եւ իրենք ալ նման աշխատանքներու ձեռնարկեն: Փափաքելի է որ ամէն հաստատութիւն կամ գրադարան թէ աստղագործութիւն սիրող անհատ անպայման օրինակ մը գնէ այս իւրօրինակ հրատարակութենէն, որ վստահ եմ հրատարակութենէն ետք շուտով պիտի վերահրատարակուի: Յուլիս 29-ին գիրքին շնորհահանդէսը տեղի պիտի ունենայ Հայ երեք հարանուանութեանց պետերուն հովանաւորութեան ներքեւ Հալէպի մէջ, իսկ աւելի ուշ՝ Պէյրութի մէջ:

Այլ աշխատանք մը որուն վրայ նկարիչ Հրազդան Թոքմաճեան կ'աշխատի փոքր չափի վրայ գունազեղ մետաքսով հիւսուած հայկական գորգեր Armenian Carpets շարքն է: Շատ նուրբ աշխատանք մը, որուն պահանջքը կայ եւ արժանի է ամէն խրախուսանքի եւ քաջալերանքի: Նախկին եգիպտահայ, ներկայիս հայրենի վարպետ նկարիչ Յակոբ Յակոբեան Հրազդանի մասին արտայայտուած է իբր talented artist:

Օրերս Մարաշի Հայրենակցական Միութեան կողմէ Հալէպի մէջ վերահրատարակուած է վաղամեռիկ ուսուցիչ Յովսէփ Տէր Վարդանեանի «Մարաշի Զարդը 1920-ին» հատորը, Մարաշի Աղետին 90 ամեակին առիթով: Երբ օրինակ մը ստացայ գիրքէն մարմինս փուշ փուշ եղաւ եւ յիշատակներ արթնցան մէջս: Մօրենական մեծ հօրս Տիգրան Զորպաճեանի (որուն չեմ տեսած, մահացած 1942-ին) հարազատը կ'ըլլար հեղինակը որուն բոլոր գիրքերը ունեինք մեր տան մէջ մակագրուած հեղինակէն: Ամէն օր մեր տան մէջ իր մասին կը խօսուէր, անոր կեանքի մղձաւանջին մասին: Իր կինը Մարիամ եւ երեք զաւակները եւ ծնողքը եղած էին զոհ 1920 Յունուարի Ֆրանքո-թուրք ընդհարումին ի Մարաշ: Յաւալի դէպքէն ետք հեղինակը իր կեանքը նուիրած է ազգին զաւակներուն դաստիարակութեան Սրբոց Յակոբեանց Վանքին մէջ Երուսաղէմ:

Այցելութիւններս շատ էին որը յիշեմ որը խոստովանիմ: Պատմական վայրերէն յիշեմ ճեպեճեան ակնաբուժարանը եւ Տոքթ. Ռոպեր Ճեպեճեանի վաղամեռիկ տիկնոջ Վիոլէթ ճեպեճեան գրադարանը որ Տիկին Լուիզ Ճեպեճեանի հոգածութիւնը կը վայելէ աջակցութեամբ հանճարեղ ակնաբոյժի որդւոյն ինչպէս եւ Սեւան Խապայեանի որոնց սիրալիր հիւրասիրութիւնը վայելեցի: Իսկ նորերէն յիշեմ Կիւլպէնկեան կեդրոնը իր արդիական Եկաւեան գրադարանով եւ երիտասարդ գրադարանավարներով: Մնացեալ պատառիկներուն մասին ուրիշ առթիւ կը ջանամ գրել:

Մասս բարով երազային հայահոծ պատմական քաղաք Հալէպ եւ հայ քաղաքացիներ որոնց մեծ մասը վերապրած է յետ եղեռնեան շրջանին թիթեղեայ ապաստանարաններու մէջ, որոնց մէկ վերջին նմոյշին դեմ յանդիման բերին զիս Մաթիկ եւ Պէթի Էպլիղաթեանները շնորհակալութիւն:

Ապրիլ յաւիտեան ո՛վ քաղաք, քո արաբատառ եւ հայատառ ցուցատախտակներով, հայ կեանքով ու մշակոյթով, խունկով ու մոմով, եւ հնաւուրց քո բերդով եւ նորաստեղծ ճանապարհներով եւ երազներով:

Արաքսի Տէրունեան- Խաչերեան



ՃՈՐԺ ԳԱԶԱԶԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՐԱՆԴԵՍԸ ՊԸԼԸՔՏԱՆԵԱՆ ԸԱՆԴԻՍԱՍՐԱՇԻՆ ՄԷՋ



Երաժշտահան Ճորժ Գազազեանի գլխավորած White Lotus Project նուագախումբը ելոյթի պահուն

Շաբաթ, 1 Մայիս 2010-ի երեկոյեան, Գահիրէի ԶԲԸՄ-ը՝ գործակցաբար Չուիցերիական «Pro-Helvetica» Մշակութային խորհուրդին, կազմակերպած էր «հոգեթով» հանդիսութիւն մը, Զելիոպոլսոյ Պըլլըքտանեան Սրահին մէջ, ներկայացնելով Եգիպտահայ «Ուտ» նուագող Ճորժ Գազազեանը, ներկայ երաժշտասեր հոծ բազմութեան:

Ճորժ Գազազեանի կողքին, ելոյթ ունեցան նաեւ հետեւեալները.

Չուիցերիայէն՝ Abbin Brun եւ Patricia Draeger (ձեռնդաշնակ, փող, սրինգ), Mohamed Shafik («Սաքսոֆոն» եւ փող), Mohamed Said (թաւջութակ), Medhat Mamdouh («թապլա»), շատ հաճելի անակնկալ մըն էր, նուագահանդէսի վերջին գործին՝ «Արմինիա»ի կատարողութեան ընթացքին Ռուբէն Թերզիպաշեանի, «տհոլ»ով ընկերակցութիւնը նուագախումբին:

Մէկ ժամ տեւող այս նուագահանդէսը,

բացառիկ յաջողութիւն մըն էր ամէն տեսակետով: Ժորժ Գազազեանի առաջին ելոյթն էր Պըլլըքտանեան հանդիսասրահին մէջ, եգիպտահայ հոծ հասարակութեան մը առջեւ, իսկ մեր համայնքին համար լաւագոյն առիթը՝ ծանօթանալու հայ երաժիշտին ատուեստին եւ տաղանդին:

Արդի երաժշտութեան աշխարհին մէջ, Ճորժ Գազազեան դարձած է յօրինող յայտնի երաժիշտ մը: Բացի իր ծննդավայր Գահիրէէն, քանի մը տարիներու ընթացքին, ան ելոյթներ ունեցած է Չիլիի, Սթոքհոլմ, Զոռմ, Նանթ, Քոփենհակ, Զամպուրկ, Լոս Անճելոս, Ամստերտամ, Տելիի, Մումպայ, Քաշմիր, Փարիզ եւ վերջապէս Երեւան:

Արդարեւ բացառիկ առիթ մըն էր մեզի շնորհուած Գահիրէի ԶԲԸՄ-ի կողմէ, ունկնդրելու եւ ըմբոշխնելու համար տաղանդաւոր եգիպտահայ երաժիշտի մը յօրինումները՝ որոնք ցարդ անծանօթ մնացած էին ներկաներու մեծամասնութեան:

Ա.Ճ



Երաժշտահան եւ ուտահար Ճորժ Գազազեան



Եգիպտահայ տհոլահար Ռուբէն Թերզիպաշեան ելոյթի պահուն



ANTHRO - MUSIC

Շաբաթ, 1 Մայիս 2010-ին, Զելիոպոլսյ Պըլըքտանեան սրահին մէջ, երաժշտահան Ճորճ Գազազեանի եւ անոր գլխաւորած նուագախումբին ելոյթէն ներշնչուած եգիպտահայ երիտասարդ նկարիչ Գեղամ Ճղալեան, իր տպաւորութիւնները արտայայտած է իւրայատուկ ոճով մը, զոր պահպանելու համար, յօդուածը կը ներկայացնենք իր բնագիր լեզուով:

«S»

In the tiny Armenian auditorium - Belekdanian Serah - with its most loyal frequenters, the minority of Armenians of Egypt, I found myself sitting witnessing what seemed like a Tech rehearsal of a band. It was the White Lotus Project headed by our favorite George Kazazian in the process of adjusting their lights, sounds and instruments. The White Lotus, formed of Swiss, Armenian and Egyptian musicians, totally contrasted with the habitual Armeno-centric audience - a typically Armenian cultural setting with an international fusion of artists on its stage.

The music starts. . .

The First *morceau* evokes a typically Parisian tune that one hears in one's stereotypically dreamy "nuit Parisienne." This specially recognition tune gradually melts into a new genre as it intertwines with the Oud. The second piece is introduced by fusing sounds, vocals and improvised solos that eventually progress into a familiar melodic tune which becomes a recurrent theme in that piece; a medley of melodic and rhythmic experiments set to invigorate its audience with this peculiar stimulating energy. They move into the third piece that sounds like a variation on a gypsy dance. The Balkan Klezmer streak in it is quite prominent.

Nothing was direct, nothing was dull, nothing was prevu...every piece was full of surprises so far. My body and guts were constantly moving yearning for a more physical

reaction to the music; stand up and dance...but *helas* the setting did not allow it!

The fourth piece, Samarkand, rendered a very expressionist musical agenda. It is like Ravel meets Gershwin but of course with your non-cessant most identifiably Eastern percussions. They move into the fifth piece that is a beautifully rhythmic tune merging the likes of Celtic and Nubian dances. This Mazurka like piece is separated with an interlude of dreamy airs.

Kazazian knows his audience and he concludes his concert with a piece entitled Armenia, It is just a wittingly subtle play on different Armenian themes but of course with the usual unexpected twist and accent. Kazazian has not fallen into the easy romantic / nostalgic take on one's national folklore which even makes this piece a much greater and impressive one.

This constant successful flirtation with different *genres* and different world music only made this concert not only an enjoyable musical *soiree* but also an anthropologically engaging experience. I was so moved and challenged by the music that even the relentlessly undisciplined noisy audience did not bother me.

Cheers To White Lotus...

Kegham Djeghalian



ԱՐՈՒԵՍՏԱԳԵՏ ԺԻՐԱՅԻ ԲԱՔԱԶԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ «ԿԱՐԻՆԷ» ՕՓԵՐԵԹԻՆ ՄԱՍԻՆ



Հինգշաբթի 17 Յունիսին, Գահիրեի ՅԲԸՄ-ի Չագըր Մշակութային Կեդրոնին մեջ, եգիպտահայ արուեստագետ դերասան եւ բեմավար Ժիրայր Բաբազեան շատ հետաքրքրական ելոյթ մը ունեցաւ, Տիգրան Չուխաճեանի «Կարինէ» օփերեթին ծագման պատմականը ընելով եւ բացատրութիւններ տալով թէ ինք ինչպէս յաջողած էր օտար արուեստագետներ հաւաքել, ղեկավարել եւ օփերեթը վերջերս բեմադրել Փարիզի մէջ:

Իր շահեկան դասախօսութեան ընթացքին, Բաբազեան լուսաբանեց ներկաները մեկնաբանութիւններ տալով թէ ներկայիս որքան դժուար է հայկական դասական գլուխ-գործոցներ գտնել, զանոնք ձեռք անցընել, պատրաստել եւ ներկայացնել Արեւմուտքի երաժշտասեր հասարակութեան:

սարակութեան:

Իր դասախօսութեան երկրորդ բաժնին մէջ, Ժիրայր Բաբազեան «Կարինէ» օփերեթէն տեսաերիզներ ցոյց տուաւ, ներկաներուն բացատրելով թէ՛ թէեւ այս օփերեթը յօրինուած է 1875-ին «Արեւելքի Offenbach»-ը նկատուող Տիգրան Չուխաճեանէ, ինչպէս որ կը վկայեն երաժշտագետներն ու քննադատները, սակայն կարելի չէ եղած երբեք այս գլուխ գործոցը ներկայացնել Արեւմուտքի երաժշտասեր հասարակութեան, այս պարագային Ֆրանսայի՝ եւ մանաւանդ անոնց սեփական լեզուով:

Իսկապէս հիանալի եւ յիշատակելի ջանասիրութիւն Ժիրայր Բաբազեանի կողմէ, արժանի՝ բոլոր երաժշտասերներուն սքանչացումին եւ գնահատանքին:

ԳԱՇԻՐԵԻ ՅԲԸՄ-Ի ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ԵՒ ՇԱՐԺԱՆԿԱՐԱԿԱՆՈՒՄԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՁԽԱՏԱՆՔԻ ՇԱԽԱՔՆԵՐ

Գահիրեի ՅԲԸՄ-ի թատերական, թուային շարժանկարահանումի եւ խաղարկութեան արուեստներու խումբը, երեք ամիս շարունակ, շաբաթը երկու անգամ կանոնաւորապէս հաւաքուելով Հելիոպոլսոյ Մասնաճիւղին՝ Չագըր Մշակութային Կեդրոնին մէջ, վերջացուց իր աշխատանքային շրջանը:

Այս արուեստագիտական հաւաքոյթներուն՝ որոնք կը ձգտէին բեմական եւ շարժանկարահանումի հմտութիւնը զարգացնել երիտասարդներուն մօտ, ներկայ կ'ըլլային մօտ 20-25 մասնակիցներ, 12էն 30 տարեկան: Աշխատանքային այս ձեռնար-

կը գոր կը ղեկավարէր Թովմաս Չաքարեան, կը ձգտէր երիտասարդներուն ծանօթացնել եւ ուսուցանել հիմնական կանոնները դերակատարութեան եւ շարժանկարահանումի, միութենական եւ ընկերային ջերմ մթնոլորտի մը մէջ:

Աշխատանքային նորաստեղծ այս ձեռնարկը շարունակելու կարելիութիւնները, յառաջիկային պիտի քննարկուին Գահիրեի ՅԲԸՄ-ի պատասպանատուներուն եւ ձեռնարկին ղեկավարին կողմէ:

Ա.Ճ



ԵՐԳԱՆԱՆ ՄԻՆԻՍՏՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆ* ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՉԱԳՐԻ ՄՉԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻՆ ՄԷՋ



Փրոֆ. Տիգրան Թումանյան իր ելույթով գրաւած է ներկաներուն ուշադրութիւնը

Կիրակի 20 Յունիսին, Զելիոպոլսոյ Չագրի Մշակութային Կեդրոնին մէջ, ներկայացուցաւ կեանքն ու վաստակը հայ համբաւաւոր երաժշտագետ՝ Միհրան Թումանյանի:

Ժողովրդական երաժշտութեան ռահվիրայ եւ ժողովրդական երգերու հաւատաւոր պաշտպան՝ այս նշանաւոր խմբավար երգահանը ներկայացնողը եղաւ իր եղբորորդին՝ Տիգրան Թումանյան, որ հայագիտութեան դասախօս է Տիթրոյթի Ուէյն Պետական համալսարանին մէջ:

ԶԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ տիար Պերճ Թերզեան, իր բացման խօսքով, ներկայացուց օրուան դասախօսը: Ապա Փրոֆ. Տիգրան Թումանյան, ժամանակին ընդմէջէն հաճելի պտոյտ մը կատարելով, իր խօսքով դիւրեց ներկաները: Ան ներկայացուց հարուստ եւ բեղմնաւոր կեանքը Միհրան Թումանյանի, անոր ունեցած յարաբերութիւնը Կոմիտաս Վարդապետի հետ եւ այն կարելոր մեծ դերը զոր կատարած է՝ հաւաքելով, ձայնագրելով եւ պահպանելով մեզի ժառանգ թողուած ազգային ժողովրդական երգերն ու երաժշտութիւնը:

Այս երաժշտական երեկոյթին երկրորդ մասը պատրաստուած էր Սօ. Միհրան Ղազէլեանէ: Սիլվա Թերզիպաշեան եւ Ռուբէն Սաատ մեներգներով ներկայացուցին Միհրան Թումանյանէ վեց ժողովրդական երգեր, խանդավառելով ներկաները որոնք հաճոյքով ըմբռնեցին դաստիարակիչ այս գուարթ երեկոն:

**Ազգաերաժշտագետ Միհրան Թումանյան ծնած է 1890-ին, Կիրին՝ Արեւմտեան Զայաստան:*

Ան եղած է Մեծն Կոմիտաս Վարդապետի հինգ նուիրեալ աշակերտներէն մին, ինչպէս նաեւ անդամ՝ Պոլսոյ համբաւաւոր «Գուսան» երգչախումբին: Թումանյան նկատուած է հեղինակութիւն մը, հայկական ժողովրդական երաժշտութեան ուսումնասիրութեան մէջ:

Մեծ եղեռնէն յետոյ, Թումանյան գաղթած է Միացեալ Նահանգներ ուր ապրած եւ ստեղծագործած է աւելի քան քառասուն երկար տարիներ: Ան ոչ միայն ղեկավարած է Պոստոնի եւ Նիւ Եորքի Զայկական Ազգային Երգչախումբերը, այլ փնտռած եւ տեսակցութիւններ ունեցած է եղեռնէն վերապրողներու հետ եւ ամենակարեւորը՝ գրի առած, ձայնագրած եւ պահպանած է անոնց ծննդավայրի ժողովրդական երգերը: 1964-ին, Թումանյան ընդունած է Սովետական Զայաստանի կառավարութեան հրաւերը Երեւան հաստատուելու եւ հրատարակելու իր ուսումնասիրութիւնները:

Կոմիտասի հետքերուն հետեւող, Թումանյանի «Զայրենի Երգ ու Բան» խորագրով չորս հատորոնց հրատարակութիւնը, կը պարփակէ այժմու եւ պատմական Զայաստանի զանազան շրջաններուն մէջ ծնունդ առած երգերու հարուստ հաւաքածոյ մը:

Թումանյան մահացած է Երեւան, 28 Զոկտեմբեր 1973-ին: Իր բեղմնաւոր կեանքին արգասիքը եղող գործերը մշտապէս ներկայ են, նոր սերունդի երգիչներու եւ ժողովրդական երգչախումբերու երգացանկերուն վրայ:

Անայիս Ծիզմեճեան



ԳԱՀԻՐԵԻ ՀԲԸՄ-Ը ԿԸ ՀՈՎԱՆԱԴՈՐԷ «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ԵՐԿՈՒ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ



Երկրորդ տարին ըլլալով, Հայաստանի Սփիւռքի Նախարարութիւնը կը կազմակերպէ համահայկական երիտասարդական «Արի Տուն» ծրագիրը, Հայաստանի մէջ համախմբելով 14-էն 25 տարեկան սփիւռքահայ երիտասարդներ, պատեհութիւնը տալով անոնց այցելելու իրենց մայր հայրենիքը եւ մօտէն ծանօթանալու անոր բնութեան, պատմութեան եւ մշակոյթին:

Ինչպէս անցեալ տարի, այս տարի եւս Գահիրէի ՀԲԸՄ-ը հովանաւորեց Գահիրէի ՀԲԸՄ-էն եւ ՀՍԸՄ ՆՈՒՊԱՐԷՆ երկու երիտասարդներ հոգալով անոնց ճամբորդութեան ծախսերը: Իսկ Հայաստանի մէջ, անոնց կեցութիւնը պիտի ստանձնէ ՀՀ Սփիւռքի Նախարարութիւնը: Յուլիս 28-էն Օգոստոս 11-2010, անոնք պիտի իջեանին ընտրուած հայ ընտանիքներու մօտ:



Այս փարի Գահիրէէն «Արի Տուն» ծրագրին մասնակցած են եօթը հոգի:

Գալուստեան Ազգային Վարժարան

Ռոզա Արթինեան
Լարա Տէմիրճեան

Նուպարեան Ազգային Վարժարան

Վարդան Թերզիպաշեան
Յակոբ Ասլանեան
Մկրտիչ Աւետրանեան

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ Տեխնպոլիս

Արմէն Անդրանիկեան - Don Bosco

ՀԲԸՄ Գահիրէ

Թամար Սապրի - ԳԱՎ

Գահիրէի խումբին միացած է Հարաւային Ափրիկէի հայ համայնքէն Սեւակ Կիւլիմեան

Անայիս Ծիզմեճեան



ԱՂԵՔՍԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՄԸՆ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

23 Յուլիսին բացումը կատարուեցաւ եգիպտահայ պասքէթպոլի մրցաշարքերու 2010ի առաջին մրցումին, Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ դաշտին վրայ, հովանաւորութեամբ Եգիպտոսի Զայոց Առաջնորդ Տէր Աշոտ Սրբ. Եպիսկոպոս Մնացականեանի եւ նախագահութեամբ Գահիրէի Թեմական Ժողովի ատենապետ Տիար Անդրանիկ Մետրոպեանի:

Օրուայ առաջին մրցումը սկսաւ երեկոյեան ժամը 8-ին Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Գահիրէի Սրբուհի Թերեզայի խումբերուն միջեւ: Առաջին իսկ վայրկեաններէն յայտնի էր որ Աղեքսանդրիոյ տղաքը կը ձգտէին բարձր մակարդակի հաճելի խաղարկութիւն մը հրամցնել ներկաներուն: Անոնք սկիզբէն տիրապետեցին խաղին ու յաղթեցին 52-31 արդիւնքով: Այսպիսով Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը հասան Կիրակի օրուայ աւարտականին:

Երկրորդ մրցումը ԶՄԸՄ Արարատին եւ ԶՄԸՄ Կամքին միջեւ էր: Բաւական հետաքրքրական մրցումէ մը ետք Արարատի տղաքը յաղթեցին 72-50 արդիւնքով:

Շաբաթ 24 Յուլիսին միայն մէկ մրցում կար ծրագրին վրայ, Գահիրէի ԶՄԸՄ

ՆՈՒՊԱՐԻ խումբը պիտի խաղար առաջին օրուայ երկրորդ մրցումին յաղթական՝ Արարատին դէմ: Ինչպէս միշտ, այս երկու գլխաւոր մրցակիցներուն խաղերը աւարտականի համ կ'ունենան նոյնիսկ եթէ մրցաշարքի մը առաջին օրը կայանան: Շաբաթ օրուայ մրցումը սկսաւ, շարունակուեցաւ ու աւարտեցաւ սաստիկ տաք ու հետաքրքրական: Առաջին 10 վայրկեանէն ետք ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը սկսան խաղալ աւելի կազմակերպուած ու ինքնավստահ ու կարողացան առաւելութիւն արձանագրել ու պահել զայն մինչեւ վերջ: Մրցումը աւարտեցաւ 74-66 ի նպաստ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն:

Ճոխ սեղաններու շուրջ բոլորուած, աւելի քան 100 հոգի ըմբռնեցին հայկական խրախճանք մը պատրաստուած ակումբին տիկնանց յանձնախումբին կողմէ:

Կիրակի 25 Յուլիսին աւարտականը երկու ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր: Աղեքսանդրիոյ խումբը բաւական լաւ դիմադրութիւն ցուցաբերեց սակայն չկարողացաւ տոկալ Գահիրէի լաւ մարզուած ու գրեթէ բոլորը երիտասադ ու նոյնիսկ պատանի խաղացողներուն դէմ: Մրցումը աւարտե-



Աղեքսանդրիոյ ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցաշարքին յաղթական հանդիսացած Գահիրէի ԶՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբը, պատասխանատուներու հետ



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պասքեթ օսլի խումբի խմբապետ Կարեն Թուլումպաճեան 2010-ի առաջին մրցաշարքին նուաճուած բաժակը ձեռքին

ցաւ 88-73 արդիւնքով: Գահիրեի տղաքը շրջապատուած ակումբին վարչականներով ու համակիրներով ստացան 2010-ի առաջին բաժակը՝ նուիրուած Ալիս եւ Գոհար Պօտուրեաններու եւ Միմիկ Վարձպետեանի կողմէ, իսկ բոլոր մարզիկները ստացան մետալներ նուիրուած Տէր եւ Տիկին Վարդ Ալեքսանեանի կողմէ:

Վարձքը կատար եգիպտահայ 5 ակումբներու վարչականներուն որոնք ջանք չեն ինայեր պահելու պասքեթօսլի խումբերը եւ հերթական մրցաշարքերով փոխայցելութեան առիթներ կը ստեղծեն տարբեր ակումբներու անդամներուն միջեւ:

Սօսի Ներտտեան / Յակոբեան

ԳԱՀԻՐԵԻ ԵՒ ԱՂԵՔՍԱՆՊՐԻՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ՄԱՐԶԱԿՈՒՄԲՆԵՐՈՒ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՑՄԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբի ամառնային եղանակի աւանդական «Պաշտօնական» բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Կիրակի 4 Յուլիսին, ակումբին գեղատեսիլ եւ օդասուն պարտեզին մէջ:

Աւելի քան 120 անդամներ, համակիրներ, բարեկամներ եւ երախաներ ներկայ եղան այդ երեկոյ եւ հաճելի պահեր անցուցին ընկերական ջերմ մթնոլորտի մը մէջ:

Երեկոյթը կը խանդավառէր եգիպտացի երգիչ ժորժ Գարգուրը: Ան Եւրոպական եւ Արեւելեան իր այլազան երգերով պարահարթակ կը հրաւիրէր պարի սիրահար զոյգերը որոնք նազանքով կը տատանէին հնաւուրց եղանակներու հմայքին տակ:

Սոյն երեկոյթը տեւեց մինչեւ կես գիշերը անց եւ վերջացաւ աւանդական վիճակահանութեամբ:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի ամառնային եղանակի բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ Ուրբաթ 18 Յունիսին, ի ներկայութեան ակումբին ծանօթ, հաւատարիմ դէմքերու եւ համակիրներու:

Այս առթիւ, տիկնանց յանձնախումբը



Գահիրեի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ կազմակերպած ամրան եղանակի բացման հանդիսութեան ներկաներէն մաս մը

ջանք չէր ինայած իր հիւրերուն համար պատրաստելու ճոխ եւ համադամ ուտելիքներ որոնք մեծապէս գնահատուեցան ներկաներուն կողմէ:

Մեղմ երաժշտութիւնը, ինչպէս նաեւ մեծ պաստառի վրայ լուսարձակուած Աշխարհի Ախոյեանութեան «Brazil / Cote d'Ivoire» ոտնագնդակի մրցումը, մեծապէս նպաստեցին երեկոյթին յաջողութեան:

Ա.Ճ



ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ «ԱՆՊՐԱՆԻԿ» ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ ՇԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Այս տարի, ՀԲԸՄ-ի «Անդրանիկ» սկաուտական բանակումին մասնակցած են մօտ 120 սկաուտներ եւ արեւոյշներ, Հալէպէն, Դամասկոսէն, Պէյրութէն, Պուենոս Այրեսէն, եւ Հայաստանէն:



«Անդրանիկ» սկաուտական երրորդ բանակումը սկսած է Լերմոնտովի (Լոռիի մարզ) ՀԲԸՄիութեան սկաուտական բանակավայրին մէջ: Բանակումի օրերուն սկաուտները եւ արեւոյշները, անկախ սկաուտական առօրեայէն, դաստիարակչական գրոյցներէն, խաղերէն եւ արշաւներէն, այցելած են Հայաստանի պատմական ու տեսարժան վայրերը:

Մասնակիցները բանակավայրի տրակառոյց սրահին մէջ ձեռնարկներ եւ հաւաքներ կազմակերպած են:

Յուլիս 24-ին, Մայր Աթոռ Ս.Էջմիածնի մէջ գիրենք ընդունած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, գրոյց ունեցած է անոնց հետ եւ փոխանցած՝ իր հայրապետական պատգամն ու օրհնութիւնը:

Բանակումին աւանդական խարոյկահանդէսը կայացած է Յուլիս 25-ին, որուն ներկայ գտնուած են ՀԲԸՄ-ի պատասխանատուներ, հիւրեր եւ ծնողքներ:

Խարոյկահանդէսին սկաուտներն ու արեւոյշները գործադրած են գեղարուեստական ծրագիր՝ երգեր, պարեր եւ խաղեր:

Նշենք թէ ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս բանակումի ընդհանուր սկաուտպետն էր Տիար Գեորգ Սանթուրեան, Պէյրութէն:

ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԶՔՕՍԱՊՏՈՅՏԸ ԴԵՊԻ «ԱՅՆ - ՍՈՒՆԱ»

Յունիս 27-էն 30, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸ կազմակերպած էր չորսօրեայ զբօսապտոյտ մը դէպի «Այն Սոխնա», Կարմիր Ծովի գեղատեսիլ ափին՝ «Ramada Renaissance» համալիրը:



Սոյն զբօսապտոյտին մասնակցեցան 35 անդամներ: Այդ ժամանակաշրջանին անոնց միացան նաեւ բազմաթիւ անհատներ եւ ընտանիքներ, միասնաբար ըմբռնչիւնելու համար խաղաղ միջավայրը, արեւը, ծովը եւ ջինջ օդը:

Հաճելի զբօսապտոյտ մը՝ գնահատուած բուրրէն:

Անցեալ տարի եւս ակումբը կազմակերպած էր զբօսապտոյտ մը դէպի «Hacienda» (Ras Sidr), իսկ նախանցեալ տարի՝ դէպի «Hurghada»:



ՀՈԳԵՐԱՆՔԻՍ ԲԱՐԵՐԱՐՈՒՄԻ ՍԱԹԵՆԻԿ Ը. ՉԱԳՐԻ ՄԱՇՈՒԱՆ 28-րդ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻ

ՀԲԸՄ-ի Բարերարուհի ողբացեալ Սաթենիկ Ը. Չագրի մահուան 28րդ տարելիցին առթիւ ՀԲԸՄ-ի շրջանակին խնդրանքով, հոգեհանգստեան պաշտօն կատարւեցաւ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցիին մէջ, Կիրակի, 23 Մայիսի առաւօտեան Ս. Պատարագէն ետք: Պատարագեց եւ քարոզեց Յոգշ. Տ. Գաբրիէլ Աբեղայ Սարգսեան:

Արարողութեան ներկայ էին ՀԲԸՄ-ի պատասխանատուներ եւ հանգուցեալին յիշատակը յարգող ազգայիններ:

ԱՆԴԱՄԱԿԱՆ

ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ



Յաւով կ'արձանագրենք աւելի քան 60 տարիներ եգիպտահայ գաղութն ներս գեղարուեստական գործունեութիւն ծաւալած, ՀԲԸՄ-ի անդամ Գրիգոր Փարթամեանի մահը, 30 Յունիս 2010-ին:

Գահիրէի Հայ Գեղարուեստասիրաց Միութենէն ներս հանգուցեալը եղած է փնտռուած ներկայութիւն մը, որպէս դերասան, բեմադրիչ, բեմայարդար եւ երգիչ: Ան մաս կազմած է Գահիրէի մէջ գործած ազգային եւ միութենական երգչախումբերուն եւ 1959 թուականէն սկսեալ Գահիրէի Պետական Օփերայի երգչախումբին:

Մեր խորին ցաւակցութիւնները կը յայտնենք ողբացեալին զաւակներուն Տէր եւ Տիկին Ճերի եւ Նայիրի Ֆինի, Տէր եւ Տիկին Ռաֆֆի եւ Մարինա Փարթամեանի, թոռներուն եւ բոլոր հարազատներուն:

ՀԲԸՄ-ի անդամներն Արմինէ Տէյիրմէնճեան, իր մահկանացուն կնքեց Շաբաթ, 10 Յունիս 2010-ին:

Խոր ցաւով կ'արձանագրենք այս գոյժը եւ մեր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալին զաւակներուն՝ Եգիպտոսի ՀԲԸՄ-ի Շրջանակային Յանձնաժողովի եւ Գահիրէի Մասնաճիւղի երկարամեայ վարչական անդամ Տիար Օննիկ Պըլըքտանեանի եւ կողակիցին Տիկին Արշոյի, Տոքթ. Յովսէփ Տէյիրմէնճեանի, թոռներուն՝ Արթոյի, Սարոյի, Էրիքի, Սարալի եւ Ժոզէֆի, նաեւ հանգուցեալին բոլոր հարազատներուն:

